ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ
Ընտրությունների դիտորդական առաքելություն
Հայաստանի Հանրապետություն
Խորհրդարանական ընտրություններ 2007

ՀՀ, Երևան, փ. Երվանդ Քոչարի17/2
Հեռ.: +374 (0)10 552399/552499/554399
Ֆաքս: +374 (0)10 554299
Էլ-փոստ: office@odihr.am

Միջանկյալ զեկույց թիվ 3
18 ապրիլի – 2 մայիսի, 2007թ.

I. ԱՄՓՈՓՈՒՄ

- Մայիսի 12-ի Ազգային ժողովի ընտրություններում համամասնական ընտրակարգի քվեաթերթիկում կլինեն քսաներկու կուսակցություն և մեկ դաշինք: 41 մեծամասնական ընտրատարածքներում կմրցի ընդհանուր թվով 119 թեկնածու (ըստ ընտրատարածքի միջինում երեք թեկնածուից մի փոքր պակաս):

- Ընտրությունների նախապատրաստական աշխատանքները շարունակվում են ըստ սահմանված ժամանակացույցի և կանոնավոր ընթացք ունեն: Տեղական ընտրական հանձնաժողովներն արդեն կազմավորվել են և գումարել իրենց առաջին նիստերը:

- Աշխույժ քարոզարշավ է նկատվում երկրով մեկ համամասնական ընտրակարգում կուսակցությունների մեծամասնության և մեծամասնական շատ թեկնածուների կողմից: Կուսակցությունների մեծ մասը նախընտրում է չհայտարարված կամ մի քանի ժամ առաջ հայտարարված ցույցեր անցկացնելու մոտեցումը:

- Թերթում տպագրված խմբագրականը, որն անդրադառնում է ընդդիմադիր կուսակցության ղեկավարի և օտարերկրացի դիվանագետի միջև տեղի ունեցած խոսակցության գաղտնալսմանը, լայնազանգված մեկնաբանություններ է հանգեցրել: Նախագահ Ռոբերտ Քոչարյանը հրապարակավ որպես «դավաճանություն» բնութագրեց ընդդիմադիր ղեկավարի խոսքերը: Դեռևս պարզ չէ, թե արդյոք հետաքննություն է նախաձեռնվել պարզելու, թե ինչպես և ում կողմից է արվել ձայնագրությունը: Նշվածից զատ՝ լրատվական դաշտն ընդհանուր առմամբ զուրկ է ընտրությունների հետ առնչվող հարցերի շուրջ բացասական լուսաբանումից:

- Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը ԵԱՀԿ մշտական հանձնաժողովին ուղղված իր ուղերձում կրկին շեշտել է ընտրությունները միջազգային չափանիշներին համապատասխան անցկացնելու ուղղությամբ հայկական իշխանությունների պատրաստակամությունը:

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Ապրիլի 17-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը հանդես է եկել ԵԱՀԿ մշտական հանձնաժողովի առջև: Իր հայտարարության զգալի մի մաս նվիրված էր մայիսի 12-ի խորհրդարանական ընտրություններին, ինչը նա բնութագրել է որպես «Հայաստանի համար լուրջ մարտահրավեր՝ ազատ և անկախ ընտրությունների միջոցով ժողովրդավարացման և օրենքի գերակայման ճանապարհին հաստատակամությունը ցուցաբերելու առումով»: Պարոն Վ. Օսկանյանը շեշտել է, որ նախորդ փորձին համեմատ, որտեղ «սխալները անհերքելի էին»,

հայկական իշխանությունները պատրաստակամություն են հայտնել բարելավելու և միջազգային չափանիշներին համապատասխան ընտրություններն անցկացնելու ուղղությամբ:

Ռուսերեն հրատարակվող *«Գոլոս Արմենիի»* թերթը ապրիլի 21-ին և 26-ին տպագրել է երկու խմբագրական, որոնք անդրադարձել են Օրինաց երկիր կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանի և Մեծ Բրիտանիայի դեսպանատան պաշտոնյայի միջև տեղի ունեցած խոսակցության գաղտնալսմանը: *«Գոլոս Արմենիին»* նշել է, որ խոսակցության ձայնագրումը՝ անհայտ ծագման, խմբագրություն է բերվել անհայտ մարդկանց կողմից: Ըստ թերթի պնդման՝ տպագրված հատվածները բացահայտում են, որ պարոն Ա. Բաղդասարյանը հետապնդում էր խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ միջազգային հանրության կողմից բացասական գնահատականի արժանացմանը: Նյութն այժմ հայտնի է դարձել որպես «Մարկո Պոլոյի միջադեպ»՝ երևանյան այն ռեստորանի անունով, որտեղ տեղի է ունեցել հանդիպումը:

Ըստ ՀՀ Սահմանադրության՝ «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան»:[1] Անհատի իրավունքներն ուղղակիորեն կիրառվում են պետության դեմ,[2] և պետությունը նույնպես հանձն է առնում երաշխավորելու հիմնական իրավունքների նկատմամբ հարգանքը:[3] Մարդու այլ իրավունքներն են արտահայտվելու ազատությունը[4] և հաղորդակցման գաղտնիության պաշտպանությունը:[5] Սույն շարադրանքի դրությամբ պարզ չէ, թե արդյոք հետաքննություն է նախաձեռնվել պարզելու, թե ինչպես և ում կողմից է արվել գաղտնալսումը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ծագած հարցի շուրջ հանդիպում է խնդրել Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) հետ, սակայն այն մերժվել է հետևյալ բացատրությամբ, այն է՝ «այս գործը պետության կողմից չի հարուցվել, հետևաբար այս պահի դրությամբ մենք մեկնաբանություններ չունենք»:

Ապրիլի 27-ին Երևանի պետական համալսարանում ուսանողներին ուղղված խոսքում, որը լայնորեն լուսաբանվել է լրատվամիջոցների կողմից, նախագահ Ռ. Քոչարյանը նշել է, որ ի պատասխան թերթում տպագրված հոդվածների, հանձնարարել է «իմ անվտանգության ծառայությանը» (ենթադրաբար՝ ԱԱԾ-ին) կապ հաստատել *«Գոլոս Արմենիի»* խմբագրության հետ և պարզել գաղտնալսման հանգամանքները: Պարոն Ռ. Քոչարյանը նաև իր կարծիքն է արտահայտել՝ նշելով, որ հոդվածների բովանդակությունը ճիշտ է և, որ պարոն Ա. Բաղդասարյանի կողմից արվածը դավաճանություն է:

Մեծ Բրիտանիայի դեսպանատունը դատապարտել է այն միջոցները, որոնց գործադրմամբ ձայնագրվել և ներկայացվել է զրույցը, ինչպես նաև հաստատել է իր պատրաստակամությունը Հայաստանում արդյունավետ ժողովրդավարական հաստատություններին և գործընթացներին նպաստելու ուղղությամբ: Օրինաց երկիրը հայտարարել է, որ Արթուր Բաղդասարյանն իր բոլոր զրույցներում, լինեն դրանք հրապարակային, թե մասնավոր, ընդգծում է միջազգային չափանիշներին համապատասխան ընտրությունների անցկացման կարևորությունը:

[1] Սահմանադրություն (2005թ.), հոդված 3, կետ 2
[2] Նույն տեղում, կետ 3՝ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:
[3] Նույն տեղում, հոդված 14՝ «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»:
[4] Նույն տեղում, հոդված 27
[5] Նույն տեղում, հոդված 23, կետ 5՝ «Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ»:

Հայկական բանակի կազմավորման 15-ամյա տարեդարձին նվիրված տոնակատարություններն առավել վառ են նկատվում՝ մոտենալով մայիսի 9-ին նշվող հաղթանակի օրվա տոնի գագաթնակետին:

III. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

Մայիսի 2–ին լրացավ ընտրապայքարից դուրս գալու վերջնաժամկետը: Այսուհետ համամասնական ընտրակարգով կմրցեն 22 կուսակցություն և մեկ դաշինք, այն բանից հետո, երբ գրանցված երկու կուսակցություններ՝ Հայոց համազգային շարժումը և Առաջադիմական կուսակցությունը ապրիլի 29–ին և մայիսի 2–ին համապատասխանաբար հետ վերցրեցին իրենց ցուցակները: Մեծամասնական ընտրապայքարից որոշ թեկնածուների դուրս գալու արդյունքում մայիսի 2-ի վերջնաժամկետից հետո ընդհանուր թվով 119 թեկնածու կշարունակեն ընտրապայքարը և կհայտնվեն մեծամասնական քվեաթերթիկներում: Ըստ ընտրատարածքի միջինում թեկնածուների թիվը կազմում է երեքից մի փոքր պակաս. մեկ թեկնածու ունեցող ընտրատարածքների թիվն անփոփոխ է՝ յոթը, իսկ տասնմեկ ընտրատարածքներում կա ընդամենը երկու թեկնածու: Թեկնածուների ինքնաբացարկի համար բերված տարածված պատճառաբանությունը հաղթանակի քիչ հնարավորության իրատեսական գնահատականն է:

Ապրիլի 5-ին առաջին ատյանի դատարանը երկարաձգեց թիվ 14 ԸԸՀ-ի (Աշտարակ) թեկնածու Վարդան Մալխասյանի նախաքննական կալանքը: Ընտրական օրենսգրքում կան դրույթներ, որոնք թույլ են տալիս անձին նախաքննական կալանքի ժամանակ առաջադրված և գրանցված լինել որպես թեկնածու (ինչպես պարոն Վ. Մալխասյանի դեպքում), և, որ Ազգային ժողովի ընտրությունների թեկնածուն կարող է կալանավորվել կամ դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) համաձայնությամբ:[6] Ե'վ ԿԸՀ-ն, և' դատարանի պաշտոնյան հաստատել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ պարոն Վ. Մալխասյանի կալանքի երկարաձգման առնչությամբ ԿԸՀ-ի հետ ո'չ խորհրդակցել և ո'չ էլ տեղեկացրել են: Ներկայումս դատարանը դեռ քննարկում է ընտրական օրենսգրքով նախատեսված երկարաձգման օրինականության վերաբերյալ գործը, ինչպես նաև դրա հետ առնչվող բողոք է ներկայացվել ԿԸՀ:

IV. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ա. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ընտրությունների վարչական նախապատրաստական աշխատանքներն ընթանում են ըստ ժամանակացույցի: Սույն զեկույցում ամփոփված ժամանակահատվածում մի շարք կարևոր վերջնաժամկետներ են անցել՝ նախատեսված ընտրությունների նախապատրաստման համար: Ապրիլի 27-ին սպառվեց ընտրողների ցուցակում ընդգրկվելու համար քաղաքացիների դիմումների ընդունման ժամանակաշրջանը: Տեղամասային ընտրական հանձնաժողովները (ՏԸՀ) ձևավորվել են ապրիլի 23-ից մինչև 26-ն ընկած ժամանակահատվածում և գումարել իրենց առաջին նիստերը, որոնց ընթացքում ապրիլի 27-ին ընտրվել են երեք ղեկավար պաշտոնատարները: Մայիսի 2-ին՝ կուսակցությունների և թեկնածուների ինքնաբացարկի վերջնաժամկետից հետո, ԿԸՀ-ն հաստատել է քվեաթերթիկների ձևը:

ԿԸՀ-ը շարունակում է բաց պահել ընտրությունների նախապատրաստական աշխատանքների ընթացակարգը: Այն սահմանել է լրատվամիջոցների համար նախատեսված բրիֆինգների ժամանակացույց և իր կայքում տեղադրել քննարկված բողոքների աղյուսակը: ԿԸՀ-ի կայքի պարբերաբար անհասանելի լինելու վերաբերյալ թիվ 1 միջանկյալ զեկույցում նշված

[6] Ընտրական օրենսգիրք, հոդված 111.6

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի դիտարկմանը հաջորդիվ՝ ԿԸՀ-ը վերջերս պարզաբանում է ավելացրել կայքի առաջին էջում՝ մեջբերելով ծառայության մատուցողի հավաստիացումները և կայքի հասանելիության տեխնիկական մանրամասները:

Ապրիլի 23-ին տեղի ունեցած արտահերթ նիստում ԿԸՀ-ն հաստատել է իր կանոնակարգի փոփոխությունը, ըստ որի սահմանափակվում է լիազորված ներկայացուցիչների՝ ԿԸՀ-ի նիստին ներկա գտնվելու իրավունքը՝ թույլ տալով ներկա լինել միայն այն ժամանակ, երբ քննարկվում են կուսակցությունների գրանցման վերաբերյալ հարցեր:[7] Սրան հաջորդում է ապրիլի 20-ին ԿԸՀ-ի նիստը, որի օրակարգում ընդգրկված էր «Հանրապետություն» կուսակցության[8] և Իմպիչմենտ դաշինքի դիմումների քննարկումը և որի ժամանակ ԿԸՀ անդամների մեծ մասի կողմից հարց է բարձրացվել քննարկմանը լիազորված ներկայացուցիչների մասնակցության վերաբերյալ:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ-րի) մեծ մասը արդյունավետ է աշխատում և բաց է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի երկարաժամկետ դիտորդների հետ աշխատելիս: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի դիտորդներն արձանագրել են, որ թիվ 17 ԸԸՀ-ի (Արտաշատ) և թիվ 39 ԸԸՀ-ի (Վայոց Ձոր) աշխատանքներում տեղական ինքնակառավարման մարմինների ազդեցության ներքո խախտվում են Ընտրական օրենսգրքի 32.1 հոդվածով անկախության մասին ամրագրված դրույթները:

Ընտրական օրենսգրքում չկան դրույթներ ընտրական մարմիններում գենդերային ներգրավվածության մասին: ԿԸՀ-ի ինն անդամից երկուսը կին են (թիվ 1 միջանկյալ զեկույցում նշվել է[9], որ ԿԸՀ-ում կա երեք կին, բայց ԿԸՀ-ի ցուցակում ներկայացված կնոջը՝ դատական համակարգը ներկայացնող անդամ,[10] 2007 թվականի փետրվարին փաստորեն փոխարինել է տղամարդ): ԸԸՀ-երում կանանց ներգրավվածությունը կազմում նույնիսկ ավելի ցածր է, այն է՝ 15 տոկոս. 41 ԸԸՀ-երից 11-ում ընդհանրապես կին անդամներ չկան: Միայն երեք ԸԸՀ-եր իրենց կազմում ունեն կին նախագահ, իսկ երեք ԸԸՀ-երում կանայք զբաղեցնում են նախագահի տեղակալի պաշտոն:

ՏԸՀ-ի անդամ դառնալու համար անհրաժեշտ պայման է ընտրական ընթացակարգերի համար վերապատրաստված լինելը: Ապրիլի 27-ին հավաքված ՏԸՀ-ը, լրացուցիչ վերապատրաստում են անցնում ընտրությունների օրվան նախապատրաստվելու համար, որը կմեկնարկի ապրիլի 27–ին և կանցկացվի ԿԸՀ-ի և Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) հայաստանյան գրասենյակի հետ համատեղ:

Բ. ՏԵՂԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԸ

Մայիսի 2-ին լրացավ ընտրությունները դիտարկող տեղական կազմակերպությունների՝ ԿԸՀ-ի հավատարմագրման վերջնաժամկետը: Գրանցվել է հիսուներեք հասարակական կազմակերպություն (ՀԿ)՝ դրանով իսկ ցուցաբերելով մայիսի 12-ի ընտրություններում տեղական քաղաքացիական հասարակության հետաքրքրության բարձր աստիճան: ԿԸՀ-ը տասը ՀԿ-րի մերժել է հավատարմագրման մեջ հիմնականում այն պատճառով, որ նրանք չեն բավարարել այն պահանջը, ըստ որի իրենց կանոնադրության մեջ սահմանված գործունեության ոլորտների շարքում[11] պետք է ընդգրկվի «ժողովրդավարություն և մարդու իրավունքների պաշտպանություն»

[7] Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ միջանկյալ զեկույց թիվ 1-ը՝ http://www.osce.org/documents/odihr/2007/04/23888_en.pdf
[8] Ընդդիմադիր կուսակցություն, որը չպետք է շփոթել իշխանական Հանրապետական կուսակցության հետ:
[9] Որոշում No.90-Ն, ըստ որի փոփոխվում է ԿԸՀ-ի No.40-Ն որոշումը: Կուսակցությունը/դաշինքը կարող է նշանակել երկու լիազորված ներկայացուցիչ ընտրությունների ողջ ընթացքի համար (Ընտրական օրենսգիրք, հոդված 100.5):
[10] ԿԸՀ-ի կայքը՝ www.elections.am, թարմացված չէր ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի երկիր ժամանման պահի դրությամբ:
[11] Ընտրական օրենսգիրք, հոդված 29

ոլորտը: Տեղական դիտորդական խմբերը, որոնց ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ը հանդիպել է, նշել են, որ իրենք հիմնականում կենտրոնացած են ընտրությունների օրը դիտարկելու վրա: Տեղական դիտորդական խմբերի կողմից հրապարակված սակավաթիվ միջանկյալ զեկույցներ կան դիտարկման արդյունքների վերաբերյալ:

Գ. ԱՇԽԱՏԱՆՔՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ը տեղյակ է որոշ գործողությունների շուրջ լայնատարած միջադեպերի և հնարավոր շահարկիչ մեկնաբանությունների մասին, որոնք հանրության առանձին անհատներ բնութագրում են որպես նախապատրաստական աշխատանքներ ընտրակեղծիքների համար: Դրանցից ամենատարածվածն է «անձնագրահավաքների» մասին հայտարարությունը, այն է՝ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները անձնագրերի տվյալներ են վերցնում կամ հավաքագրում անձնագրերի պատճենները կամ բուն անձնագրերը: Արդյոք հայտարարությունները որևէ հիմք ունեն, թե ոչ, հնարավոր չէ ստուգել, այնուամենայնիվ, դրանց տարածումը կարող է ընդունվել ընտրազանգվածի մի մասի կողմից անվստահության և ցինիզմի արտահայտում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի դիտորդները ներկա են եղել մի հանդիպման, որի ժամանակ Կոտայքի մարզպետը զգուշացրել է շրջանի քաղաքապետներին նման անձնագրահավաքների մասին, իսկ Սևանում ընտրողների համար նախատեսված տեղեկատվական հեռուստահոլովակների միջոցով մի տեղական ՀԿ քարոզում է «մի' վաճառեք Ձեր քվեն» արշավը: Կենտրոնացված տարբերակով ԿԸՀ-ն և այլ պետական մարմինները հետամուտ չեն եղել նման նախաձեռնությունների՝ ընտրողներին շեշտելու համար, որ քվեի գաղտնիությունը պաշտպանված է օրենքով և, որ ընտրությունների օրվա ընթացակարգերն ապահովում են որևէ մեկի կողմից ընտրողի քվեարկության մասին իմանալն անհնար լինի:

Դ. ԸՆՏՐԱՅՈՒՑԱԿՆԵՐԸ

Համաձայն մայիսի 2-ի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից արված հայտարարության՝ գրանցված ընտրողների թիվը կազմում է 2,301,662: Սույն թիվը, որն ավելի պակաս է համեմատած ապրիլի 9–ին ոստիկանության կողմից հայտարարվածից (տե'ս միջանկյալ զեկույց թիվ 2[12]), ըստ երևույթին, առաջացել է տարբեր կազմակերպությունների ուղղիչ ջանքերի արդյունքում (ոստիկանություն, համայնքների ղեկավարներ, քաղաքական կուսակցություններ և ՀԿ-եր): Համաձայն ստացված տեղեկատվության՝ քչերն են օգտվել հեռախոսային երկու թեժ գծերից ընտրողների ցուցակում առկա անճշտությունների մասին հայտնելու կամ ԸՏՀ-ի տարածքում ընտրողների ցուցակում իրենց անունների առկայությունը ստուգելու նպատակով:

ԿԸՀ-ը և ոստիկանությունը տեղեկացրել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ ընտրողների ցուցակում գենդերային առանձնացում չկա (համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2006 թվականի տվյալների՝[13] կանայք կազմում են բնակչության 51,7 տոկոսը, ինչը պետք է որ արտացոլվի ընտրողների ցուցակում):

Թեև ապրիլի 27-ին լրացավ ընտրացուցակում ընդգրկվելու համար քաղաքացիների դիմումների ներկայացման վերջնաժամկետը, ընտրողները դեռ կարող են դիմել համայնքների ղեկավարներին կամ ոստիկանությանը ընտրացուցակները ուղղելու համար (ընտրությունների օրվանից մինչև յոթ և հինգ օրվա ընթացքում համապատասխանաբար): Ընտրությունների օրը քաղաքացին, որն ընդգրկված չէ ընտրողների ցուցակում, կարող է ընդգրկվել այն ընտրատեղամասի լրացուցիչ ընտրողների ցուցակում, որտեղ նա օրենքով պետք է քվեարկի

[12] Տե'ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ միջանկյալ զեկույց թիվ 2-ը՝ http://www.osce.org/documents/odihr/2007/04/24101_en.pdf
[13] www.armstat.am

դատարանի կամ ոստիկանության կողմից տրված գրության հիման վրա, ինչը կարելի է ձեռք բերել ընդհուպ մինչև ընտրությունների օրը՝ ընտրությունների օրը ներառյալ:

Ընտրական օրենսգրքում հատուկ դրույթ է ընդգրկվել, որը նախատեսում է բժշկական հաստատություններում քվեարկեություն անցկացնել շարժական քվեատուփերի միջոցով՝ բերված ԸՏՀ-ի այն տեղամասերից, որտեղ գտնվում է տվյալ հաստատությունը: Նման քվեարկությունը նախատեսված է միայն համամասնական ընտրակարգի համար: Զինծառայողները կքվեարկեն սովորական ընտրատեղամասերում, քանի որ բոլոր զորամասերը տեղակայված են ամենամոտ գտնվող ընտրատեղամասից 50 կիլոմետրից պակաս հեռավորության վրա. զինակոչիկները նույնպես կքվեարկեն միայն համամասնական ընտրակարգով: Առնչվող ԸՏՀ-ները առանձին ընտրացուցակներ կունենան բժշկական հաստատությունների և զինծառայողների քվեարկության համար: Քանի որ ընտրատեղամասում հերթապահ նշանակված ոստիկանները կարող են քվեարկել միայն այդ տեղամասում, բոլոր ԸՏՀ-ները առանձին ընտրողացուցակ կունենան ոստիկանների համար:

Ե. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԻՄՈՒՄՆԵՐ

Ընտրական օրենսգիրքը թույլ է տալիս դիմումներ ներկայացնել դատարան ընտրական հանձնաժողովների գործողությունների (կամ անգործության) դեմ: ԿԸՀ-ի գործողությունների դեմ ուղղված դիմումները գտնվում են դատարանի իրավասության ներքո (բացառությամբ այն գործողությունների, որոնք վերաբերում են ընտրության արդյունքների ամփոփմանը, որոնք ուղարկվում են Սահմանադրական դատարան):[14] Այս դրույթը հակասում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքին, որն ամրագրում է, որ ընտրությունների հետ առնչվող գործերը չպետք է քննվեն դատարանի կողմից: Փոխարենը, ըստ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ընտրական վեճերը քննվում են որպես քաղաքացիական գործեր՝ հետևաբար, դրանք պետք է ընկնեն առաջին ատյանի դատարանի իրավասության ներքո: Փորձը ցույց է տվել, որ ԿԸՀ-ի գործողությունների (կամ անգործության) մասին դիմումներն իսկապես բողոքարկվում են առաջին ատյանի դատարան (այսինքն՝ համաձայն Քաղաքացիական օրենսգրքի և հակասելով Ընտրական օրենսգրքին): ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն դեռ, սակայն, չի դիտարկել օրենսդրական դրույթների հակասության որևէ բացասական հետևանք, ինչպես օրինակ հետաձգումներ կամ շփոթություն հայցվորների մոտ:

Առաջին ատյանի դատարանը ուսումնասիրել է «Գերագույն խորհուրդ - պատգամավորական ակումբ» (ՀԿ)-ի գործն ընդդեմ ԿԸՀ-ի, սակայն գործի հետ առնչվող կողմերը բացակա են եղել: Հայցվորը բողոքել է, որ ԿԸՀ-ն թերացել է խախտումներին պատասխանելու մեջ, այն է՝ հեռուստաալիքները քարոզարշավային հաղորդումները հեռարձակել են պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածից շուտ: Դատարանը վճռել է, որ բողոքն անհիմն է (պաշտոնական վճիռը դեռևս պետք է կայացվի):[15] Նշված ՀԿ-ի կողմից ԿԸՀ-ի դեմ ուղղված մնացած 12 բողոքները չեն քննարկվել սույն շարադրանքի դրությամբ:

«Հանրապետություն» կուսակցությունը բողոք է ներկայացրել առաջին ատյանի դատարան ԿԸՀ-ի անգործության առնչությամբ, քաղաքական կուսակցությունների քարոզարշավը լրատվամիջոցներում լուսաբանման մեջ հավասար պայմաններով ապահովելու կապակցությամբ: Հայցվորը պնդում է, որ իր քարոզարշավային միջոցառումներից երեքը չեն հեռարձակվել և որ ԿԸՀ-ը չի կատարել իր իրավական պարտավորությունը, այն է՝ վերահսկել ընտրարշավն ըստ կանոնակարգի անցկացումը: Դատարանը ապրիլի 28-ին մերժել է բողոքը:

[14] Ընտրական օրենսգիրք, հոդված 40.3
[15] Վճիռները պետք է կայացվեն գործի քննման 14 օրվա ընթացքում. Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 124, փոփոխված ըստ 21 փետրվարի, 2007թ.

ԿԸՀ-ի մի պաշտոնյա նշել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ ԿԸՀ-ին ուղղված յուրաքանչյուր բողոք ստանում է պաշտոնական պատասխան՝ արտացոլելով ԿԸՀ-ի դիրքորոշումը, չնայած սա չի բնութագրվում որպես ԿԸՀ-ի «որոշում»: Սույն զեկույցում ամփոփված ժամանակահատվածում[16] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրել են, որ ԿԸՀ-ին ուղղված վեց բողոք է գրանցվել: Սրանցից երկուսը վերաբերում էին քարոզչական պաստառների համար տարածքների տրամադրմանը, իսկ երրորդում հարց էր բարձրացվել առանց թեկնածուի թույլտվության թեկնածուի քարոզչական պաստառի փակցման մասին. նշված դեպքում ԿԸՀ-ն միջոցներ է ձեռնարկել, որպեսզի պաստառն իջեցվի: Չորրորդը վերաբերում էր քարոզչական հոլովակների հեռարձակման ժամին (տե՛ս ստորև, հատված VI): ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ակնկալում է փաստաթղթեր ստանալ մնացած երկուսի վերաբերյալ: ԿԸՀ-ն թափանցիկ է վարում է բողոքները:[17]

Սակավաթիվ բողոքներ են ներկայացվել ԸԸՀ-ներ: Թիվ 39 ԸԸՀ-ը (Վայոց Ձոր) բողոք է ստացել թեկնածուի կողմից քարոզչական պաստառում հայկական դրոշը ներառելու վերաբերյալ (Ընտրական օրենսգրքի ոտնահարում[18])՝ դիմելով թեկնածուին գրանցումից հանելու համար: ԸԸՀ-ը համարել է, որ պաստառի վրա պատկերված խնդրո առարկան հայկական դրոշը չէ: Հայցվորը՝ մրցակից թեկնածուն, բողոքարկել է ԸԸՀ-ի որոշումը առաջին ատյանի դատարանում, որը մայիսի 2-ին վճռեց, որ ԸԸՀ-ի որոշումը այն մասին, որ պատկերվածը դրոշը չէ, ճիշտ չէ, սակայն մերժել է դիմումն այն հիմքի վրա, որ միայն ԸԸՀ-ն է իրավասու և ոչ հայցվորը դիմել դատարան թեկնածուին գրանցումից հանելու համար: Թիվ 29 ԸԸՀ-ը (Սպիտակ) բողոք է ստացել Վահան Մադաթյանից (Դաշինք կուսակցություն)՝ նշելով, որ մրցակից թեկնածու Արկադի Համբարձումյանը (Հանրապետական կուսակցություն) գրանցվելիս չի ներկայացրել օրենքով պահանջված եկամուտի հայտարարման վերաբերյալ: Պարոն Վ. Մադաթյանը դիմում է ներկայացրել պարոն Ա. Համբարձումյանին գրանցումից հանելու համար: Ապրիլի 30-ին ԸԸՀ-ը մերժել է բողոքը: Թիվ 17 ԸԸՀ-ը (Արտաշատ) բողոքներ է ստացել ԸՏՀ-ի տարածքում ընտրողների ցուցակների անհասանելի լինելու և քարոզարշավի կենտրոնական գրասենյակի համար տարածքներ չտրամադրելու վերաբերյալ: Ապրիլի 28-ին երկու բողոքներն էլ մերժվել են ԸԸՀ-ի կողմից:

Դատախազները նույնպես դերակատարություն ունեն ընտրական գործընթացին վերաբերող բողոքների քննման մեջ: Գլխավոր դատախազը կազմել է երկու աշխատանքային խումբ ընտրությունների հետ առնչվող խախտումների դեմ արդյունավետ մեխանիզմների ստեղծման նպատակով (մեկը՝ ընտրական խախտումների մասին զեկույցներն ուսումնասիրելու, մյուսը՝ դրանց հաջորդող որևէ հետաքննություն վերահսկելու համար): Երկրի դատախազներին հանձնարարական է տրվել անհապաղ հայտնել աշխատանքային խմբերին ընտրական խախտումների մասին: Գլխավոր դատախազությունը հրապարակել է իր առաջին զեկույցը՝ ամփոփելով աշխատանքային խմբերին ներկայացված գործերը. աշխատանքային խմբերի ուշադրությանը մինչ օրս բերված 18 գործերից հինգը քրեական են[19], իսկ մեկն անհիմն է համարվել: Ներկայումս քննվող քրեական գործերից են կուսակցության և թեկնածուների քարոզչական գրասենյակների վրա տեղի ունեցած հարձակումները և բախումները թեկնածուների միջև: Գլխավոր դատախազության մի պաշտոնյա նշել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ մնացած գործերը գտնվում են քննության ընթացքում:

[16] Սրանք ստացվել են ի հավելումն նախկինում ներկայացված յոթ բողոքների (տես միջանկյալ զեկույց թիվ 2)
[17] ԿԸՀ-ի՝ բողոքների բազան հասանելի է www.elections.am հասցեով սկսած 2007 թվականի ապրիլի 18-ից: Այն պարունակում է դիմորդի, բողոքի առարկայի, բողոքի ներկայացման և դրան տրված պատասխանի ամսաթվի մասին տեղեկատվություն:
[18] Ընտրական օրենսգիրք, հոդված 21.3
[19] ՀՀ Քրեական օրենսգրքի 117, 131, 185 (2.1), 235 (1) և 258(3.1) հոդվածներով

V. ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Աշխույժ քարոզարշավ է նկատվում երկրով մեկ համամասնական ընտրակարգում կուսակցությունների մեծամասնության և մեծամասնական շատ թեկնածուների մոտ՝ ընդգրկելով փողոցային գովազդի և ցույցերի լայն կիրառումը: Կուսակցություններից շատերը, ըստ երևույթին, նախընտրում են նախապես չհայտարարված կամ մի քանի ժամ առաջ հայտարարված ցույցեր անցկացնելու մոտեցումը: Դրանք հաճախ անց են կացվում դրսում, սակայն գրավում են զգալի լսարան՝ բարձրախոսների, տեքստային հաղորդագրությունների, անհատական հեռախոսազանգերի և այլ միջոցների կիրառմամբ հանդիպման վրա սևեռելով մարդկանց ուշադրությունը: Այս երևույթը թերևս բացատրում է այն հանգամանքը, թե ինչու է հիմնականում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ը դժվարություն ունեցել կուսակցություններից ծրագրված ցույցերի և քարոզչական հանդիպումների ժամանակացույցը ձեռք բերելու մեջ:

Երկրի կտրվածքով տարբերություն կա ընթացակարգի իրագործման մեջ (սահմանված Ընտրական օրենսգրքով և ԿԸՀ-ի կանոնակարգով), այն է՝ ԸԸՀ-ի կողմից ստացված և համապատասխան մարմիններին հղված դիմումների հիման վրա քաղաքային և համայնքային իշխանությունները պետք է կուսակցություններին և թեկնածուներին հավասար և անվճար հիմունքներով տարածքներ տրամադրեն քարոզչական հանդիպումների անցկացման համար: Որոշ ԸԸՀ-եր խիստ հետևում են կանոնակարգին, սակայն կան դեպքեր, երբ կուսակցությունները կամ թեկնածուներն ուղղակիորեն դիմում են քաղաքային իշխանություններին, ԸԸՀ-ի ակնհայտ հաստատման հետ մեկտեղ կամ (ինչպես նշված է վերևում) հանպատրաստից հանդիպումներ անցկացնում: Թիվ 21 ԸԸՀ-ի (Արմավիր) և թիվ 24 ԸԸՀ-ի (Մարտունի) անդամները նշել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի դիտորդներին, որ իրենք դժգոհ են չհայտարարված ցույցերի անցկացումից, սակայն դրանք արգելող որևէ գործողություն չեն ձեռնարկել:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ծանոթացել է Օրինաց երկրին ուղղված Սպիտակի քաղաքապետարանի նամակի պատճենի հետ, որտեղ 100,000 ՀՀ դրամ (€200) է պահանջվում քարոզչական հանդիպման նպատակով տարածքի տրամադրման համար, ինչն Օրինաց երկրի կողմից ԿԸՀ-ին ուղղված բողոքի առարկան է (տե՛ս միջանկյալ զեկույց թիվ 2): ԿԸՀ-ը պատասխանել է ապրիլի 12-ին՝ նշելով, որ կուսակցություններին կարող է տրամադրվել միայն կենտրոնական կառավարության սեփականությունը և ոչ տեղական ինքնակառավարման մարմիններինը:

Պաստառների լայնատարած տեղադրման հետ մեկտեղ Երևանի կենտրոնի կոմերցիոն վահանակներում գերակշռում են Հանրապետական կուսակցության և Բարգավաճ Հայաստանի քարոզչական պաստառները, ինչպես նաև Հայ հեղափոխական դաշնակցության (ՀՅԴ)՝ մի փոքր ավելի պակաս:[20] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ը ստացել է «Ժառանգություն» կուսակցության կողմից երեք գովազդային գործակալություններին 2007 թվականի մարտին և ապրիլին ուղարկված չորս նամակների պատճենները, որոնցով խնդրվում է մակերես տրամադրել վահանակներում, և դրանք բոլորը ստացել են բացասական պատասխան: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ը փորձ է արել, դեռևս անհաջող, հանդիպումներ կազմակերպել այդ գործակալություններից որոշների հետ և պարզաբանել կոմերցիոն պաստառների հաստատման և տեղադրման կանոնները:

Ինչպես նշվել է թիվ 2 միջանկյալ զեկույցում, Ընտրական օրենսգիրքն արգելում է կուսակցություններին և թեկնածուներին ընտրարշավի ընթացքում քաղաքացիներին արտոնյալ պայմաններով, ուղղակի կամ անուղղակի, տալ կամ խոստանալ որևէ ապրանքներ կամ ծառայություններ:[21] Սույն դրույթի կիրառումը սահմանափակ է եղել մասամբ այն պատճառով,

[20] Ինչպես արդեն նշվել է, Երևանում կոմերցիոն վահանակների մակերեսի զգալի մասն օգտագործված է հայկական բանակի 15-ամյակի տոնակատարության նպատակով:
[21] Ընտրական օրենսգիրք, հոդված 18.7

որ դատախազները չեն կամենում քննել այնպիսի գործեր, որտեղ չի կարող ապացուցվել ընտրողների վրա ազդեցության հետ ունեցած հստակ առնչությունը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ուղղակիորեն դիտարկել է քաղաքական կուսակցության կողմից ապրանքների տրամադրման մի դեպք, որը համապատասխանում է ընտրարշավի ընթացքում արգելված վարվելակերպի մասին իրավական սահմանմանը: Ընտրական իշխանությունները, սույն շարադրանքի դրությամբ, որևէ պաշտոնական բողոք չեն ստացել ընդդեմ այս կամ այլ նմանատիպ վարվելակերպի:

Թիվ 30 ԸԸՀ-ում գրանցված մեծամասնական թեկնածուի կողմնակիցն ապրիլի 26-ին դանակահարվել է, որի հետևանքով մահացել է: Ապրիլի 28-ին գլխավոր դատախազությունը զանգահարել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի երևանյան գրասենյակ փոխանցելու, որ «ոչ մի քաղաքական ենթատեքստ» չի կարելի վերագրել միջադեպին. այն հավելյան տեղեկատվություն է տրամադրել ապրիլի 28-ին կայքում տեղադրված հայտարարությունում: Գլխավոր դատախազությունը նման հայտարարություն է արել՝ արձագանքելով ապրիլի 19-ին Երևանի Էրեբունի համայնքում մրցակից քաղաքական կուսակցությունների աջակիցների միջև տեղի ունեցած երկկողմանի կրակոցների մասին հայտարարությանը:

Ապրիլի 22-ին Ժառանգություն կուսակցությունը բողոք է ներկայացրել Երևանի Ավանի համայնքում՝ նշելով, որ կուսակցության քարոզարշավն իրակացնող անձը հարձակման է ենթարկվել: Ոստիկանությունը հայտնել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ ստացել է սույն բողոքը:

VI. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Ընդհանուր առմամբ, ելնելով պաշտոնական քարոզարշավի ընթացքում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից լրատվամիջոցների մոնիտորինգի արդյունքներից՝ լրատվամիջոցներն ընտրողներին ընդարձակ տեղեկատվություն են տրամադրել քաղաքական և ընտրական անցուդարձի վերաբերյալ: Նկատելի տարբերություն կա համազգային և տեղական լրատվամիջոցների լուսաբանման մեջ. երկրով մեկ հեռարձակում ապահովող լրատվամիջոցները (ներառյալ Երևանում տեղակայված և երկրի այլ հատվածներում հեռարձակվող լրատվամիջոցները) հիմնականում անդրադառնում են իշխանություններին և իշխանական քաղաքական ուժերին, մինչդեռ որոշ տեղական լրատվամիջոցներ առավել մեծ ուշադրություն են դարձրել տեղական մրցակցություններին՝ ընդգրկելով առանձին մեծամասնական մրցակիցներին:

Պաշտոնական քարոզարշավի մեկնարկից ի վեր երկու հանրային հեռարձակողներն էլ (*ՀՌ1* հեռուստաընկերությունը և *Հանրային ռադիոն)* ընդհանուր առմամբ բռնել են խմբագրական ուղի, որը հավասար պայմաններ կերաշխավորի մրցակիցների համար: Հանրային ռադիոն մասնավորապես մինչև օրս իր լրատվական ծրագրերում առաջարկել է հավասարակշռված քաղաքական լուսաբանում (թե ժամի և թե երանգավորման առումով). *ՀՌ1* հեռուստաընկերությունը հիմնականում լուսաբանել է ընտրություններին մասնակցող մի շարք ուժերի: Քանակապես, *ՀՌ1*-ի լրատվական թողարկումներում ամենամեծ ուշադրությունը ստացել է Օրինաց երկիրը, որին հաջորդում է Հայաստանի ժողովրդական կուսակցությունը: Օրինաց երկրի լուսաբանման որոշ հատուկ տարրեր հարց են առաջացնում՝ արդյոք ալիքի մոտեցումն անկողմնակալ է: Արթուր Բաղդասարյանի մասին *«Գոլոս Արմենիի»* հոդվածներից առաջինի տպագրումից հետո (տե՛ս վերևում, բաժին II) *ՀՌ1*-ը որոշեց հոդվածն ամբողջությամբ և բառացի ներկայացնել իր հիմնական լրատվական ծրագրում (թեև բաց թողնելով մեկ բացասական մեկնաբանություն նախագահի մասին)՝ չներկայացնելով Օրինաց երկրի կամ որևէ այլ աղբյուրի պատասխանը:

Այսպես կոչված «Մարկո Պոլոյի միջադեպից» զատ՝ հեռուստատեսությամբ լուսաբանումը, ընդհանուր առմամբ, զուրկ էր քննադատական դիտողություններից կամ բացասական տեղեկատվությունից: Մի շարք լրատվական թողարկումներում լուսաբանվել են քաղաքական

թեմաների առավել լայն սպեկտր՝ հետևաբար համապատասխանելով արդար և ազատ պայմաններ պահանջող իրավական դրույթներին:[22] Համենայն դեպս, մոնիտորինգ արված հեռուստաալիքները նվիրել են լրատվական թողարկումներում քաղաքականության հետ առնչվող տեղեկատվության ամենամեծ բաժինը երեք իշխանական և մեկ իշխանամետ կուսակցություններին: Իշխանությունների գործունեության նկատմամբ լրատվամիջոցների հիմնական ուշադրությունը մեծապես կենտրոնացված է վարչապետ Սերժ Սարգսյանի վրա: Հեռուստատեսային հաղորդումները ներկայացրել են պարոն Ս. Սարգսյանի հանրային ելույթները երկրով մեկ շրջագայելիս այնպես, որ հստակ չեն տարբերակվում որպես վարչապետ և Հանրապետական կուսակցության ղեկավարի նրա դերակատարությունները, և դա արտացոլում է ավելի ընդարձակ հարց, այն է՝ դժվար է կիրառել պաշտոնյաների կողմից քաղաքական քարոզչության կամ քարոզչության համար պետական աղբյուրների օգտագործման վերաբերյալ իրավական դրույթները:[23]

Երկրով մեկ հեռարձակում ապահովող բոլոր չորս հեռուստաալիքները (*Հ1* հանրային հեռուստաընկերությունը և մասնավոր ալիքներ *Հ2, Արմենիա հեռուստաընկերությունը* և *ԱԼՄ հեռուստաընկերությունը*) կառավարությանը հատկացրել են մոնիտորինգ արված քաղաքական բովանդակության ամենաբարձր բաժինը (օրինակ՝ *Հ2*-ը հատկացրել է գրեթե բացառապես դրական և չեզոք լուսաբանման 31 տոկոս): Բոլոր ալիքները մինչև օրս ներկայացրել են կառավարությունը մեծապես դրական կամ չեզոք վերաբերմունքով: Իշխանությունների լուսաբանումից զատ, մոնիտորինգ արված հեռուստաալիքները իրենց լրատվական թողարկումներում քաղաքական կուսակցություններին վերաբերող տեղեկատվության ամենամեծ մասը հատկացրել են Հանրապետական կուսակցությանը (*Արմենիա հեռուստաընկերությունում* և *ԱԼՄ հեռուստաընկերությունում*), ՀՅԴ-ին (*Երկիր Մեդիայում*) և Բարգավաճ Հայաստանին (*Հ2-ում, Շանթ հեռուստաընկերությունում* և *Կենտրոն հեռուստաընկերությունում*). նշված կուսակցությունների վերաբերյալ բացասական լուսաբանումը գրեթե ընդհանրապես չկա: Միայն ռադիո կայաններն են (հատկապես *RFE/Ազատություն Ռադիոն*) հեռարձակում ընտրությունների մասնակիցների կողմից հնչեցված քննադատական տեսակետները, ինչպիսիք են Իմպիչմենտ դաշինքը, Նոր ժամանակներ կուսակցությունը և «Հանրապետություն» կուսակցությունը:

Հանրային լրատվամիջոցները մինչև օրս իրականացրել են անվճար ժամանակի տրամադրման վերաբերյալ իրենց իրավական պարտավորությունները, և բոլոր մասնակից կուսակցությունները և դաշինքներն օգտվել են իրենց իրավունքից, թեև ոչ լիովին: Ապրիլի 19-ին[24] մեծամասնական անկախ թեկնածու Թաթուլ Մանասարյանը ելույթ է ունեցել Հայաստանի մարքսիստական կուսակցությանը տրամադրված անվճար եթերաժամի ընթացքում: Թեև արգելվում է եթերաժամը մեկ այլ կուսակցությանը կամ ներկայացուցչին փոխանցելը[25], և ըստ Ընտրական օրենսգրքի[26]՝ կուսակցությունը կարող էր հանվել գրանցումից, ԿԸՀ-ն ցուցաբերել է ավելի ներողամիտ մոտեցում՝ բոլորին նախազգուշացում ուղղելով:

Անվճար և վճարովի քարոզչական հոլովակների հեռարձակման ժամանակահատվածը փոխելու վերաբերյալ ԿԸՀ-ին մինչ այդ ուղղված երկու դիմումները (տե՛ս միջանկյալ զեկույց թիվ 2) մերժվել են ԿԸՀ-ի կողմից: Նույն հարցի շուրջ ապրիլի 27-ին ԿԸՀ-ին բողոք են ներկայացրել տասներկու համամասնական ընտրակարգի մասնակիցներ, որոնք մերժվել են ապրիլի 30-ին:

[22] Արմինֆո, 19 ապրիլի, 2007թ.
[23] Նույն տեղում, հոդված 20.3 և 20.5
[24] Նույն տեղում, հոդված 22
[25] ԿԸՀ-ի որոշում N 84 ընդունված 8 ապրիլի, 2007թ.
[26] Ընտրական օրենսգիրք, հոդված 18.8

Տպագիր մամուլը ներկայացրել է տեսակետների բազմազանություն և առավել քննադատական և վերլուծական մոտեցում, քան էլեկտրոնային լրատվամիջոցները, սակայն դրանց ցածր տպաքանակը դարձնում է դրանք միայն որպես տեղեկատվության լրացուցիչ աղբյուր: Պետության կողմից ֆինանսավորվող «*Հայաստանի Հանրապետությունը*» հստակ կապ է ցույց տվել իշխանությունների հետ՝ տրամադրելով լուսաբանման 39 տոկոսը և 13 տոկոսը համապատասխանաբար կառավարությանը և նախագահին: «*Հայկական ժամանակ*» թերթը չափազանց քննադատական վերաբերմունք է դրսևորել իշխանությունների նկատմամբ:

VII. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ Առաքելության ղեկավար, դեսպան Բորիս Ֆոլեցը կրկին հանդիպել է Ազգային ժողովի նախագահի հետ վերջինիս հրավերով՝ տեղեկանալու ընտրությունների շուրջ խմբակցություններից կազմված խորհրդարանական աշխատանքային խմբի մասին: Սույն խմբի հետ հետագայում աշխատանքային շփումներ են նախաձեռնվել: Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի դիտարկման՝ հայկական իշխանությունները, ներառյալ աշխատանքային խումբը, շարունակում են միջանկյալ զեկույցների և մինչև օրս արված երկարաժամկետ դիտարկման արդյունքում արված հայտնաբերումների բովանդակության մասին նախապես տեղեկանալու հայցեր ուղղել: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ը առանձնահատուկ նշել է իր պատասխանում, որ սույն դիմումի բավարարմամբ կխախտվի ընտրությունների դիտարկման ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հարգանք վայելող մեթոդաբանությունը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ը նաև առանձնահատուկ նշել է, որ հայկական իշխանությունները իրենց ընտրական և իրավական համակարգում ունեն անհրաժեշտ մեխանիզմներ որևէ անկանոնավորություն բացահայտելու և ուղղելու համար:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ը ապրիլի 23-ին հանդիպել է Բարգավաճ Հայաստանի ղեկավարության հետ՝ դրանով իսկ ավարտելով կուսակցությունների հետ բարձրաստիճան շփումների ներածական փուլը: ԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի հիմնական թիմի անդամներն այցելել են շրջանները՝ նախքան ընտրությունները օրը տիրող միջավայրի և գործընթացների շուրջ իրենց դիտարկումն ամրապնդելու, ինչպես նաև 14 երկարաժամկետ դիտորդական խմբերի աշխատանքը լրացնելու համար:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ապրիլի 25-ին հանդիպել է ԵԱՀԿ անդամ պետությունների ռեզիդենտ դիվանագիտական համայնքի ներկայացուցիչների և միջազգային կազմակերպությունների հետ:

Ընտրությունների օրվա համար ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ակնկալում է ընդունել 298 կարճաժամկետ դիտորդ (ԿԴ), որոնց կաջակցեն ԵԱՀԿ անդամ պետությունների կողմից տրամադրված և 14 տեղական մակարդակում հավաքագրված ԿԴ-ները: Սպասվում է, որ ԵԱՀԿ Խորհրդանական վեհաժողովից մոտ 60 անդամ, Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովից 31 անդամ և Եվրոպական խորհրդարանից 8 անդամ ընտրությունների օրը կմիանան ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի դիտորդական ջանքերին: